ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2022 թվականի թիվ 334 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9- Ի <<ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 85-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9- Ի ԹԻՎ 85-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ը՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 2-ի:

3) «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 3-ի:

4) «Խոշոր հրդեհապայթունավտանգ վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 4-ի:

5) «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 5-ի:

6) «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 6-ի:

7) «Խոշոր քարաթափումների և սողանքի առաջացման ժամանակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 7-ի:

8) «Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 8-ի:

9) «Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գործելու պլան»-ը՝ համաձայն հավելված 9-ի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Վ. Փիրումյանին:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ը՝ հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի հուլիսի 9-ի թիվ 85-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2022թ. նոյեմբերի 22
ք. Իջևան